529 Հոգիս ծարավ է կենդանի Աստծուն,

1. Հոգիս ծարավ է կենդանի Աստծուն,
Կյանքի աղբյուրի ջրին կենսատու,
Սուրբ Հոգու մի նոր ու թարմ օծության,
Որ կառաջնորդի երկրպագության:

Ալելուիա՛, օրհնություն Քեզ,
Ալելուիա՛, գոհություն Քեզ,
Ալելուիա՛, մեծություն Քեզ,
Ալելուիա՛, Հիսո՛ւս, օրհնություն Քեզ:

2. Քո հայտնությունը կյանք է, խնդություն,
Մեղմ, անուշ ձայնդ՝ զորեղ արթնություն,
Լուսե հայացքդ սեր է ներշնչում,
Հոգու օծություն, անվերջ զորություն:

3. Հոգիս ծարավ է կենդանի Խոսքին,
Պենտեկոստեի զորության հոսքին:
Թող շնորհաց Հոգիդ բերի օծություն,
Փառքի հեղեղներ՝ սրբությամբ լեցուն: